# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ՄԵՆԱԿ ՉԵՔ ՄՆԱ

Մարզի կենցաղսպասարկման ոլորտի բոլոր աշխատողներն էլ սրտի կսկիծով ընդունեցին Հայկական ՍՍՀ-ում տեղի ունեցած ահավոր աղետի լուրը: Բնակչության կենցաղային սպասարկման մարզային վարչության ձեռնարկությունների ֆոնդերից այսօրվա դրությամբ աղետյալների օգնության հաշվին է փոխանցվել 87 հազար 700, իսկ արհմիութենական կազմակերպությունների ունեցած միջոցներից՝ 19 հազար ռուբլի: Մարզի կենցաղայիններն իրենց անձնական պահումներից հավաքել ու օգնության ֆոնդ են մտցրել 27 հազար 510 ռուբլի: Անցկացված շաբաթօրյակներին մասնակցել են 9 հազարից ավելի աշխատողներ, որոնք բնակչությանը ցույց են տվել 10 հազար 100 ռուբլու ծառայություններ: Վաստակած ամբողջ աշխատավարձը՝ 3 հազար 900 ռուբլի գումարով, փոխանցվել է օգնության ֆոնդին: Վարչության բոլոր ձեռնարկությունների կոլեկտիվներն էլ որոշել են առաջիկայում էլ իրենց աշխատավարձից մասհանումներ անել աղետյալներին օգնելու համար: Բացի այդ, կենցաղայինները երկրաշարժից տուժած վայրերն են առաքել մոտ ութ հազար ռուբլու հագուստեղեն, վառարաններ, երկաթաթիթեղ:

***

Ստեփխառնառևտրի ու նրա օբյեկտների աշխատողները ևս հնարավոր ամեն բան անում են Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցած աննախադեպ երկրաշարժից տուժածներին օգնելու, նրանց վիշտը կիսելու համար: Առևտրի աշխատողները ողջ միտինգում որոշել են կեսամսյա աշխատավարձը փոխանցել աղետյալների օգնության ֆոնդ: Արդեն Ստեփանավանի քաղսովետում բացված № 114253 հաշվին է փոխանցվել 9 հազար ռուբլի. Ստեփխառնառևտրի սոցիալական ու կուլտուր-կենցաղային միջոցառումների ֆոնդից № 700412 հաշվին է փոխանցվել 50 հազար ռուբլի: Գնվել ու Լենինական են առաքվել ավելի քան 7,3 հազար ռուբլու հագուստեղեն ու այլ ապրանքներ:

Մարզկենտրոնի առևտրի աշխատողներն այսուհետև էլ կշարունակեն իրենց քույրերին ու եղբայրներին ցույց տրվող օգնությունը:

***

«Ձեր մեծ վշտի մեջ մենք ձեզ մենակ չենք թողնի»: Այս խոսքերն այսօր կարելի է լսել Ստեփանավանի ՍՍՀՄ 50-ամյակի անվան կոշիկի ֆաբրիկայի կոլեկտիվի յուրաքանչյուր անդամից: Խոսքեր, որ արտաբերվում են նրանց սրտի խորքից ու ալեկոծված հոգու ծալքերից: Եվ նրանք՝ ստեփանավանցի կոշկագործները, հենց առաջին օրվանից հնարավոր ամեն ինչ են անում իրենց հայրենակիցների վիշտն ինչ-որ չափով թեթևացնելու, երկրաշարժից տուժածներին օգնելու համար: Ձեռնարկության բազմաթիվ աշխատողներ կամավոր դոնորներ են դարձել, 11 հոգի մեկնել են երկրաշարժից տուժած վայրեր ու փրկարար աշխատանքներ են կատարում:

Կոշկագործների կոլեկտիվը աշխատել է բոլոր հանգստյան օրերին և յոթ օրվա աշխատավարձը, մոտ 50 հազար ռուբլի, փոխանցել աղետյալների օգնության ֆոնդը: Ֆաբրիկայի ֆոնդերից առայժմ № 700412 հաշվին է փոխանցվել 38 հազար 200 ռուբլի: Բանվոր-ծառայողների անձնական միջոցներից հավաքվել և տուժածների օգնության ֆոնդն է մտցվել 4300 ռուբլի: Ձեռք են բերվել և երկրաշարժից տուժած վայրերն առաքվել 3200 ռուբլու տաք հագուստներ ու սննդամթերքներ: Որոշվել է այսուհետև էլ ֆաբրիկայի խանութում ստացվելիք արտասահմանյան ու հայրենական արտադրության ու մեծ պահանջարկ ունեցող ապրանքներն ևս ուղարկել տուժածներին: Ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի խորհրդի որոշմամբ անվարձահատույց կերպով աղետյալներին է առաքվել 38 հազար ռուբլու ընդհանուր արժեքով 10 հազար 560 զույգ կոշիկ:

***

ԼՂԻՄ ագրոարդի ավտոտրանսպորտային ձեռնարկության կոլեկտիվը ձեռնարկության ֆոնդերից աղետյալների օգնության հաշիվն է փոխանցել 30 հազար, իսկ արհմիութենական կազմակերպության միջոցներից՝ 5 հազար ռուբլի: Ավտոտրանսպորտայիններն իրենց անձնական միջոցներից հավաքել են 15 հազար ռուբլի:

Երկրաշարժի հետևանքները վերացնելու աշխատանքներին օգնելու համար տուժած վայրերն են ուղարկվել հինգ ինքնաթափեր, որոնք այնտեղ աշխատել են 10 օր: Երևան մեքենա է հատկացվել տեխնիկա և այլ ապրանքներ տեղափոխելու համար:

***

Պտուղ-բանջարեղենի ու խաղողի վերամշակման ԼՂԻՄ արտադրական միավորման բանվոր-ծառայողներն իրենց աշխատավարձից շուրջ 36 հազար ռուբլի են մտցրել երկրաշարժից տուժածների օգնության ֆոնդը: 302 հազար ռուբլի այդ ֆոնդին է հատկացվել միավորման ձեռնարկությունների տնտեսական ու սոցիալ-կուլտուրական զարգացման ֆոնդերից, 10 հազարը՝ արհմիութենական կազմակերպությունների ունեցած միջոցներից:

Բացի այդ, տուժածներին են առաքվել 2350 ռուբլու տաք հագուստներ, մեծ քանակությամբ նյութեր: Օգնության աշխատանքները շարունակվում են:

Դ. ԻՇԽԱՆՅԱՆ